«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն



Հաստատում եմ՝
Ռեկտոր՝ Է.Մ. Սանդոյան
№ 9 «15» 09 2026թ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտություն՝ ՝ 022801.00.6 «Արևելագիտություն»

Կրթական ծրագիր՝ 022801.03.6 «Իրանագիտություն»

1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

022801.03.6 Իրանագիտություն կրթական ծրագիր, իրագործվող «Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպության կողմից**:**

Բակալավրի կրթական ծրագիրը իրագործվում է առկա կրթության ձևով:

Կրթական ծրագրով ուսումնառության ժամկետը կազմում է 4 տարի:

Բակալավրի կրթական ծրագրի ծավալը կազմում է 240 կրեդիտ:

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ծրագրի բովանդակությունը, նպատակի և խնդիրների մանրամասն նկարագրությունը, կրթական ծրագրի ակտուալությունը և յուրահատկությունը, տվյալ կրթական ծրագրի/մասնագիտության շրջանավարտների կարիքը աշխատաշուկայում:

Իրանագիտություն կրթական ծրագիրը նպատակ ունի ձևավորել խորքային և համակողմանի պատկերացումներ Իրանի պատմության, լեզվամշակութային ժառանգության, հասարակական-քաղաքական համակարգերի, կրոնական դոկտրինների և տարածաշրջանային նշանակության մասին: Այն ներառում է պարսկերենի (ֆարսի) խորացված ուսուցում, ինչպես նաև Իրանի ու իրանախոս երկրների վերաբերյալ առարկաներ՝ մշակույթ, գրականություն, փիլիսոփայություն, միջազգային հարաբերություններ և ժամանակակից զարգացումներ:

Ծրագրի գլխավոր նպատակն է պատրաստել մասնագետներ, ովքեր ունեն տեսական ու գործնական գիտելիքներ Իրանի և հարակից տարածաշրջանների վերաբերյալ և ունակ են կիրառել այդ գիտելիքները գիտահետազոտական, դիվանագիտական, վերլուծական և միջմշակութային ոլորտներում: Խնդիրներն են՝ ձևավորել տարածաշրջանային վերլուծության ունակություններ, զարգացնել պարսկերենից և պարսկերենով թարգմանության հմտություններ, խթանել անկախ հետազոտական և գրավոր գործունեություն, ինչպես նաև ուսանողներին տրամադրել մասնագիտական կողմնորոշում աշխատաշուկայում կիրառելի ուղղություններով:

Իրանագիտության կրթական ծրագրի ակտուալությունը պայմանավորված է Իրանի՝ որպես տարածաշրջանային գերտերության ռազմավարական դերով Մերձավոր Արևելքում, Կովկասում և Կենտրոնական Ասիայում: Իրանի քաղաքական, տնտեսական և մշակութային ազդեցությունը՝ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ մակարդակով, պահանջում է համապատասխան մասնագետների առկայություն՝ տարբեր ոլորտներում՝ պետական կառավարման համակարգում, դիվանագիտության մեջ, տնտեսության մեջ, անվտանգության ոլորտում և ակադեմիական հաստատություններում:

Ծրագրի յուրահատկությունը կայանում է դասական իրանագիտական պատրաստվածության և ժամանակակից իրանամետ ուսումնասիրությունների միավորմամբ, ինչն ապահովում է բազմաշերտ մասնագիտական հմտությունների ձևավորում: Ուսանողները հնարավորություն ունեն աշխատելու պարսկական բնագրերի, պաշտոնական փաստաթղթերի, ժամանակակից մեդիա և քաղաքական վերլուծությունների հետ՝ ձեռք բերելով նաև անկախ վերլուծության և կարծիքի ձեւակերպման հմտություններ:

Շրջանավարտները կարող են աշխատել գիտահետազոտական հաստատություններում, պետական կառավարման և արտաքին հարաբերությունների ոլորտներում, թարգմանչական գործունեության, մեդիայի, միջազգային կազմակերպությունների և ՀԿ-ների համակարգերում: Իրանի հետ հարաբերվող կազմակերպությունների աճող թիվը նաև մեծացնում է որակյալ իրանագետների պահանջարկը՝ ապահովելով նրանց մրցունակությունը տեղական և միջազգային աշխատաշուկայում:

2.2. Բակալավրի կրթական ծրագրի յուրացման մեջ մտնում են ուսումնական և արտադրողական պրակտիկաներ՝

- Ուսումնական պրակտիկայի ձևերը՝ Ներածական (Կրթական), Գիտահետազոտական աշխատանք
- Արտադրական պրակտիկայի ձևերը՝ Նախադիպլոմային պրակտիկա

2.3. Պետական ավարտական ատեստացիայի մասի մեջ կարող են մտնել՝

Վերջնական ավարտական աշխատանքի պատրաստում և պաշտպանություն

3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գիտելիքները՝

1. Իրանի պատմության, մշակույթի, լեզվական համակարգերի և գրականության վերաբերյալ խորքային գիտելիքներ
2. Իրանի քաղաքական, սոցիալ-տնտեսական ու կրոնական համակարգերի և տարածաշրջանային նշանակության մասին ընդհանուր և մասնագիտական պատկերացում
3. Իրանական աղբյուրագիտության ու վերլուծական մեթոդաբանության իմացություն

Հմտությունները՝

- *գիտելիքի կիրառման հմտությունները՝*

1. Պարսկերենի բանավոր և գրավոր կիրառություն գիտական և գործնական ոլորտներում
2. Մասնագիտական տեքստերի համեմատական վերլուծություն և թարգմանություն

- *ընդհանրական իմացական հմտությունները՝*

1. Իրանի մասին բազմաշերտ և տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվության հավաքագրման, վերլուծության, համադրության և վերծանման կարողություն:
2. Գիտական գաղափարների ձևակերպում, հիմնավորում և ներկայացում՝ բանավոր և գրավոր եղանակով՝ կիրառելով քննադատական և վերլուծական մտածողություն:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

1. Իրանական թեմատիկայով հետազոտության իրականացման կարողություն
2. Գիտական և հասարակական համատեքստում պատասխանատու դիրքորոշում և ինքնուրույն գործունեություն

Կրթական ծրագրի շրջանավարտների ակնկալվող մասնագիտական գործունեության տեսակները

- Գիտահետազոտական գործունեություն
- Պարսկերեն թարգմանչական և մշակութային հաղորդակցման աշխատանքներ
- Վերլուծական և փորձագիտական աշխատանքներ՝ պետական և մասնավոր հատվածներում
- Միջազգային հարաբերություններ և հանրային դիվանագիտություն

Կրթական ծրագրի պահանջարկը.

«Իրանագիտություն» կրթական ծրագիրը ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի աշխարհաքաղաքական և տարածաշրջանային միջավայրում՝ հաշվի առնելով Իրանի հետ պատմականորեն ձևավորված կապերը, ինչպես նաև երկու երկրների միջև քաղաքական, տնտեսական և մշակութային համագործակցության կարևորությունը:

Մասնագիտությունը պահանջված է գիտահետազոտական և կրթական հաստատություններում, պետական կառավարման, դիվանագիտական և միջազգային կառույցներում, ինչպես նաև վերլուծական և թարգմանչական ոլորտներում: Շրջանավարտները կարող են զբաղվել Իրանի ներքաղաքական և արտաքին քաղաքական գործընթացների, հասարակական կյանքի, պատմության, մշակույթի և տարածաշրջանային զարգացումների ուսումնասիրությամբ ու վերլուծությամբ:

Ծրագիրը նպաստում է պարսկերեն լեզվին, իրանական քաղաքակրթությանն ու մշակութային ժառանգությանը տիրապետող մասնագետների պատրաստմանը, որոնք կարող են հանդես գալ որպես միջմշակութային հաղորդակցության միջնորդներ՝ ամրապնդելով հայ-իրանական կապերն ու տարածաշրջանային փոխըմբռնումը: